Միսիոներական ծառայության օրհնությունները

Ուսումնասիրեք սուրբ գրությունների հետևյալ հատվածներն ու արտահայտությունները: Ուսումնասիրելիս փնտրեք հետևյալը.

1. Օրհնություններ, որոնք Տերը կարող է տալ մարդկանց մեր միսիոներական ջանքերի միջոցով:
2. Օրհնություններ, որոնք Տերը կարող է տալ մեզ՝ միսիա ծառայելու համար:

   Վարդապետություն և Ուխտեր 4.1–4

   Վարդապետություն և Ուխտեր 15.6

   Վարդապետություն և Ուխտեր 18.14–16

   Վարդապետություն և Ուխտեր 31.3–8

   Վարդապետություն և Ուխտեր 50.22

Նախագահ Ռասսել Մ. Նելսոնն ուսուցանել է.



Եղբայրներ և քույրեր, Հիսուս Քրիստոսի ավետարանը երբեք ավելի անհրաժեշտ չի եղել, քան այսօր: Հակառակությունը խախտում է այն ամենը, ինչը Փրկիչը պաշտպանել և ուսուցանել է: Ես սիրում եմ Տեր Հիսուս Քրիստոսին և վկայում եմ, որ Նրա ավետարանը խաղաղության *միակ* մնայուն լուծումն է: Նրա ավետարանը խաղաղության ավետարան է [տես Վարդապետություն և Ուխտեր 27.16]: . . .

Բոլոր միսիոներներն ուսուցանում և վկայում են Փրկչի մասին: Աշխարհում տիրող հոգևոր խավարը Հիսուս Քրիստոսի լույսի կարիքն ավելի է մեծացնում: Յուրաքանչյուր ոք արժանի է իմանալու Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի մասին: Յուրաքանչյուր ոք արժանի է իմանալու, թե որտեղ կարող է գտնել այն խաղաղությունը, որը «[վեր է] ամեն հասկացողությունից» [Փիլիպպեցիներին 4.7]: (Ռասսել Մ. Նելսոն, «Քարոզենք խաղաղության ավետարանը», *Լիահոնա*, մայիս 2022, 6–7)

Յոթանասունից երեց Մարկուս Բ. Նաշն ուսուցանել է.

Ավետարանով կիսվելն ուրախություն և հույս է առաջացնում ինչպես տվողի, այնպես էլ ստացողի հոգում: Իսկապես, «որքան մեծ կլինի ձեր ուրախությունը», [Վարդապետություն և Ուխտեր 18.15], երբ կիսվեք ավետարանով: Ավետարանով կիսվելն ավելացնում է գոյություն ունեցող ուրախությունը և գոյություն ունեցող հույսը: . . .

Երբ մենք բարձր չենք պահում ավետարանի լույսը, մենք տեղափոխվում ենք ստվերների տակ, որտեղ ենթարկվում ենք գայթակղությունների: Կարևոր է իմանալ, որ հակառակն անելը նույնպես ճիշտ է. բարձր պահելով ավետարանի լույսը, մենք ավելի շատ ենք մոտենում այդ լույսին և պաշտպանվում ենք գայթակղությունից: Դա մեծ օրհնություն է այսօրվա աշխարհում: (Մարկուս Բ. Նաշ, «Բարձր պահեք ձեր լույսը», *Լիահոնա*, նոյ. 2021, 71–72)

© 2024 by Intellectual Reserve, Inc. All rights reserved. PD80007812_201_603-1